տակը, ուր կանգնած է չորս բաժանմունք ունեցող աղյուսաշեն բաղնիքը, որի պատերի ստորին մասերը քարաշեն են։ Շենքերը թաղածածկ են և ներսից երեում են սվաղի հետքերը։ Պատերի մեջ մնացել են տաք և սառը ջուր մատակարարող կավե խողովակները (երկար. 36 սմ.)։ Մի շարքում են դասավորված սառը ջրի (11 սմ. տրամագծով) և տաք ջրի (հավանաբար 7 սմ.) խողովակները։ Կաթսալատունը եղել է նկարագրված շենքերից դուրս։ Բերդատեղի պարիսպներից դուրս կան բազմաթիվ մեծ կառուցների ավերակներ, իսկ հարավարևելյան կողմում, գետակի մյուս ափին անտառի մեջ տարածվում են բազմաթիվ տնատեղերի և իրարից բավական հեռու երեք թաղածածկ կիսավեր եկեղեցիները։ Այդ ամբողջ տարածությունը մեծ ավանի մնացորդների հետքեր է հիշեցնում։

ԽԱՉՔԱՐԵՐԻ ՎՐԱ, ՈՐՈՆՔ ԿԱՆԳՆԱԾ ԵՆ ԵՂԵԼ «ՄՈՒՂԴՈՒՍԻՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՏ» ԿՈՉՎԱԾ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

434. Սուրբ խաչս բարեխաւս պարոն Ղալաբէկին. թվ. :ՌԿ: (1611)

435. Սուրբ խաչս է բարեխաւս Խանխաթունին հոգուն: Մանկասարին:

436. Սուրբ խաչս բարեխաւս Խաթունին հոգուն:

437. Կամաւն Աստուծոյ պարոն տէր Ոհանէս կանգնեցի սուրբ խաչերս. թագաւոր Շահ Աբազն, երկրիս պարոն տէր Ոհանէս:

438. Սուրբ խաչս բարեխաւս Զիլփիխանին:

439. Կամաւն Աստուծոյ ես Ղալաբակի Ո · · · հաւրեղբայր իմ պարոն տէր Ոհանէս դա · · ·

440. Աստուած ողորմի Դէլոյիխանին, որ է որդի Սարումին:

441. *Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ գյուղամիջյան եկեղեցու պատին՝*
Կամաւն Աստուծոյ ես տէր Թաքէոս, Մարկոս եղբարս ամեն կանկնեցինք սուրբ Աստուածածնայ եկեղեցիս. Որստակէս աւագ քահանայ. տէր Աստուած ողորմեա.

Հրատ. Բարխուդարեանց, 200—201։

30. ԶԱՓԱՐ ԳՅՈՒՂ

Գյուղից մոտ 10 կիլոմետր վեր, խորը անտառի և մացառների մեջ կան շենքերի և գերեզմանատան մնացորդներ՝ մի ավերակի մոտ ընկած

· · · · ·
· · · · ·

ՆՈՍԻՏԱՒ
ՆԻՆՈՐՋԱ
ՅՍԽԱՎԱՆ
Է ՅԱՃԸ
ՀԱՅՐԱ
ՊԵՏԷՆ
ԱՆԻՃԱ
ՃԱՅԻՄՄԵՂ
ԱՑՆՏԻՐՈ

ՔԱՐԻ ՎՐԱ

442. · · · ՍԲ. ՍՏԵՓԱՆ|ՆՈՍԻ ՏԱԻ|ՆԻՆ. ՈՐ ԶԱ|ՑՍ ԽԱ-ՓԱՆ|Է :ՑԺԸ:| ՀԱՑՐԱ|ՊԵՏԷՆ| ԱՆԻԾԱ|Ծ ԱՑ, ԻՄ ՄԵՂ|ԱՑՆ ՏԷՐ Է · · · · · ·

Նանոթ. Ըստ բովանդակության եղել է նաև նվիրատվական մեծ արձանագրություն։